ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստmailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«10» նոյեմբերի 2018 թվականի N 25

## ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հաշվի առնելով «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Խաթուն Հակոբյանի կողմից ծառայողական պարտականությունների որակյալ կատարումը՝ կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Խաթուն Հակոբյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ տալ միանվագ դրամական պարգևատրում՝ 37 000 դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, նոյեմբերի 10
գ. Մուսալեռ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» նոյեմբերի 2018 թվականի N 52

## ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 72-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 72-Ն որոշման մեջ կատարել վերաբաշխում՝

   1) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր / պակասեցնել 25.0 հազար դրամ:

   1) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4213 /կոմունալ ծառայություններ/ ավելացնել 25.0 հազար դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թվական, նոյեմբերի 27

գ. Մուսալեռ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
# ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» նոյեմբերի 2018 թվականի N 51

## ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇԸ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հերթական նիստի N 13 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող 04-069-028-003 ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի առանձնացվող 0,019 հա հատվածին տալ հետևյալ հասցեավորումը՝ Երիտասարդական փողոց, թիվ 51/1 իսկ մյուս՝ 0,06 հա հատվածի հասցեն թողնել նույնը՝ Շառլ-Տիրան Թեքեյան փողոց, թիվ 2/6:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, նոյեմբերի 19
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» նոյեմբերի 2018 թվականի N 50

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 72-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում սույն թվականի նոյեմբերի 14-ին կայանալիք «Բաց Ջվարճալի դպրոցներ» միջոցառման շրջանակներում մասնակիցների համար խմելու ջուր ձեռք բերելու նպատակով տրամադրել 12 000 /տասներկու հազար/ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, նոյեմբերի 12
գ. Մուսալեռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«9» նոյեմբերի 2018 թվականի N 49

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N43 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 09.11.2018 թ. N86 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի 2018 թվականի հոկտեմբերի 20-ի «Հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին» N43 որոշման 1-ին կետում «դեկտեմբերի 31» բառերը փոխարինել «հուլիսի 24» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, նոյեմբերի 9
գ. Մուսալեռ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ**
**ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» նոյեմբերի 2018 թվականի N 48

## ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հերթական նիստի N 13 որոշումը՝ որոշում եմ.

3. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող 04-069-027-001 ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի առանձնացվող 0.053 հա հատվածին տալ հետևյալ հասցեավորումը՝ Տիգրան Մեծի 8-րդ փողոցի, թիվ 2, իսկ մյուս՝ 0.054 հա հատվածի հասցեն թողնել նույնը՝ Տիգրան Մեծ փողոց, թիվ 1:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, նոյեմբերի 8
գ. Մուսալեռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
## ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» նոյեմբերի 2018 թվականի N 47

ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005թ. N2387-Ն որոշման կարգի 53-րդ կետի 2-րդ ենթակետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 30-րդ կետով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի վարչական տարածքում գտնվող 04-069-045-009 ծածկագրով արտադրական պտղասառնարանի կառուցման համար գույքի (սեփականության վկայական N2435174) հասցեն՝ Արմավիրի մարզ, գյուղ Մուսալեռ, Արցախի փողոց N 13 Ա, փոփոխել Արմավիրի մարզ, գյուղ Մուսալեռ, Արցախի փողոց 13/1 հասցեի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, նոյեմբերի 7
գ. Մուսալեռ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ**
**ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Ազնավուր Թերզյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» նոյեմբերի 2018 թվականի N 46

ԱՆՎՃԱՐ ՀԻՄՔՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՀԼԻՃ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 30-րդ կետով, հաշվի առնելով Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում այլ դահլիճների բացակայությունը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների շրջանակներում քարոզչություն կատարողներին ժողովներ, հանդիպումներ Ազգային ժողովի ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով անվճար հիմքունքներով օգտագործելու համար տրամադրել Մուսալեռ համայնքի Մ. Մաշտոց փողոցի թիվ 14 հասցեում գտնվող «Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի միջոցառումների դահլիճը (100 նստատեղ):
2. Սույն որոշման առաջին կետում նշված միջոցառումները իրականացնելու համար թույլատրել տրամադրելու շինությունը յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 18:00-21:00:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, նոյեմբերի 6
գ. Մուսալեռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» նոյեմբերի 2018 թվականի N 45

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 30-րդ կետով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների համար ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացնել անվճար տեղեր՝
   1) Տ. Անդրեասյան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող շինության պատին՝ ընդհանուր տրամադրվող չափը՝ 8 քմ,
   2) Անի թաղամասի 1-ին շենքի պատին՝ ընդհանուր տրամադրվող չափը՝ 10 քմ,
   3) Մ. Բաղրամյան 30 հասցեում գտնվող ավտոտնակի դարպասին՝ տրամադրվող չափը՝ 4 քմ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, նոյեմբերի 6
գ. Մուսալեռ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
# ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» նոյեմբերի 2018 թվականի N44

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 30-րդ կետով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք արտահերթ ընտրությունների կազմակերպման և անցկացման համար ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի տարածքում սահմանել երկու տեղամասային կենտրոն՝
   1) Մ. Մաշտոց փողոցի թիվ 14 հասցեում գտնվող «Ֆր. Վերֆելի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում: Տեղամասային կենտրոնում քվեարկությունը պատշաճ ձևով կազմակերպելու և անցկացնելու պատասխանատվությունը դնել տնօրեն Նաիրա Սվարյանի վրա:
   2) Կոմիտաս փողոցի 17/1 հասցեում գտնվող նախկին կենցաղի տան շենքում: Տեղամասային կենտրոնում քվեարկությունը պատշաճ ձևով կազմակերպելու և անցկացնելու պատասխանատվությունը դնել Արամայիս Սաֆարյանի վրա:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, նոյեմբերի 6
գ. Մուսալեռ